

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

- ✓ 2012.թ. մարտի 5-6-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը մասնակցել է ք. Թուրինում (Իտալիա) կայացած «Արևելյան Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում մասնագիտական կրթության և ուսուցման համակարգերի գնահատման համար փաստերի հավաքագրում» խորագրով սեմինարին,
- ✓ 2012թ. մարտի 12-16-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժնի պետ Ռ. Պետրոսյանը և վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Կ. Շահբազյանը մասնակցել են ք. Կիևում (Ուկրաինա) կայացած Կենտրոնական Ասիայի և Արևելյան Եվրոպայի երկրների համար EUROTRACE ծրագրային ապահովմանը նվիրված դասընթացին,
- ✓ 2012.թ. մարտի 12-15-ը ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Գևորգյանը և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Լ. Պետրոսյանը մասնակցել են ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած «Գենդերային վիճակագրություն» խորագրով աշխատանքային նստաշրջանին և հանդիպմանը,
- ✓ 2012թ. մարտի 27- 30-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Գ. Մարտիրոսյանը մասնակցել է ք. Մոսկվայում (Ռուսաստանի Դաշնություն) կայացած «Միջազգային գլոբալ համադրումների ծրագիր» խորագրով աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2012թ. ապրիլի 9-10-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը և նույն բաժնի գլխավոր մասնագետ Ս. Խաչատրյանը մասնակցել են ք. Մոսկվայում (Ռուսաստանի Դաշնություն) կայացած «Ազգային հաշիվներ 2008 դրույթների վիճակագրական պրակտիկայում ներդրման հարցերը» խորագրով խորհրդակցությանը,

- ✓ 2012 թ. ապրիլի 10-15-ը ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը մասնակցել է ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած «Թափոնների վիճակագրություն» խորագրով սեմինարին,
- ✓ 2012թ. ապրիլի 16-19-ը ՀՀ ԱՎԾ մարդահամարի վարչության պետ Վ. Գևորգյանը և նույն վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների և ծրագրավորման բաժնի պետ Ռ. Հովհաննիսյանը մասնակցել են ք. Մոսկվայում (Ռուսաստանի Դաշնություն) կայացած «Աջակցություն մարդահամարների անցկացման ժամանակ տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների արդյունավետ օգտագործմանը» խորագրով սեմինարին,
- ✓ 2012թ. ապրիլի 18-19-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Ա. Հակոբյանը մասնակցել է ք. Կոպենհագենում (Դանիա) կայացած ԵՀՔ նախագծի իրականացման առաջնայնության՝ բնապահպանական տեղեկատվության միասնական համակարգի մեթատվյալների և հաշվետվական ցանցի վերաբերյալ սեմինարին,
- ✓ 2012թ. ապրիլի 19-20-ը ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը մասնակցել է Մոսկվայում (Ռուսաստանի Դաշնություն) կայացած ԱՊՀ անդամ երկրների վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 47-րդ նիստին,
- ✓ 2012.թ. ապրիլի 23-27-ը և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի գլխավոր մասնագետ Ա. Դաշյանը և նույն բաժնի առաջին կարգի մասնագետ Ա. Շաբոյանը մասնակցել են ք. Մոսկվայում (Ռուսաստանի Դաշնություն) կայացած «Ընտրանքային հետազոտությունների կազմակերպումը» խորագրով աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2012թ.ապրիլի 23-27-ը ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը, ՀՀ ԱՎԾ Երևան քաղաքի գործակալության պետ Վ. Ավետիսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը, վիճակագրական տեղեկատվական տարածման և մարկետինգի

բաժնի պետ Ն. Մուշեղյանը մասնակցել են ք. Կոպենհագենում (Դանիա) կայացած Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը» պայմանագրի «Որակի կառավարում» և «Բիզնես վիճակագրություն» բաղադրիչների շրջանակներում ուսումնական այցելություններին: